ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-555-09.04.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետեւ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում 61-րդ կետից հետո լրացնել նոր 62-րդ եւ 63-րդ կետերով.

«62. Արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեության պլան՝ արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեությունը նկարագրող փաստաթուղթ:

«63. Արտակարգ իրավիճակով պայմանավորված բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգ՝ անկախ սեփականության ձեւից բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ եւ միջոցառումներ՝ ուղղված մարդկանց կյանքին եւ առողջությանը սպառնացող հնարավոր հետեւանքների կանխարգելմանը, նվազեցմանը եւ վերացմանը»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 8.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Հոդված 42.1 Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններ

1. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները սահմանում է արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեության հիմնական սկզբունքները, արտակարգ իրավիճակի հետեւանքների կանխարգելման, նվազեցման եւ վերացման համար անհրաժեշտ միջոցառումները:

2. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները մշակում և հաստատում է առողջապահության բնագավառի լիազոր մարմինը:

3. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ լիազոր մարմնի կողմից:

Հոդված 42.2 Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության եւ սպասարկման կարգը

1. Արտակարգ իրավիճակի դեպքում առողջապահության բնագավառի լիազոր մարմինն արտակարգ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված ողջամիտ ժամկետում մշակում և հաստատում է արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգ, որը պարտադիր է

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բոլոր կազմակերպությունների համար:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-555-09.04.2020-ԱՍ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետեւ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում 61-րդ կետից հետո լրացնել նոր 62-րդ եւ 63-րդ կետերով.

«62. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլան~~ներ~~՝ տարբեր արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեությունը նկարագրող փաստաթուղթ:

«63. Արտակարգ իրավիճակով պայմանավորված բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգ՝ անկախ ~~կազմակերպաիրավական~~ սեփականության ձեւից բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ եւ միջոցառումներ՝ ուղղված մարդկանց կյանքին եւ առողջությանը սպառնացող հնարավոր հետեւանքների կանխարգելմանը, նվազեցմանը եւ վերացմանը»:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 8.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Հոդված 42.1 Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններ

1. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլան~~ները~~ սահմանում ~~են~~ է ~~համապատասխան~~ արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեության հիմնական սկզբունքները, ~~հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային բժշկական օգնության եւ սպասարկման կարգը,~~ արտակարգ իրավիճակի հետեւանքների կանխարգելման, նվազեցման եւ վերացման համար անհրաժեշտ միջոցառումները: ~~ռեսուրսների, մարդկային ներուժի, սարքավորումների, դեղերի եւ այլ ապրանքների պահանջարկը, դրանց համալրման կարգը: առողջապահության եւ արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների եւ ոստիկանության կողմից կատարման ենթակա միջոցառումները:~~

~~2. Առողջապահության եւ արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների կողմից համատեղ մշակված արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները հաստատում է կառավարությունը:»:~~

2. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները մշակում և հաստատում է առողջապահության բնագավառի լիազոր մարմինը:

3. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ ~~կառավարության~~ լիազոր մարմնի կողմից: ~~առողջապահության եւ արտակարգ իրավիճակների բնագավառներում լիազոր մարմինների նախաձեռնությամբ:~~

Հոդված 42.2 Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության եւ սպասարկման կարգը

1. Արտակարգ իրավիճակի դեպքում առողջապահության բնագավառի լիազոր մարմինն արտակարգ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված ողջամիտ ժամկետում մշակում և հաստատում է ~~առողջապահության բնագավառի արագ արձագանքման պլան Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններից բխող համապատասխան~~ արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգը, որը պարտադիր է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բոլոր կազմակերպությունների համար: ~~հաստատվում է կառավարությունը, արտակարգ իրավիճակ հայտարարելուց ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, առողջապահության բնագավառի լիազոր մարմնի ներկայացմամբ:~~

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքում լրացումներ կատարելու մասին>> (*Պ-555-09.04.2020-ԱՍ-011/0*) նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված բանավոր առաջարկների

Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
<< կառավարություն	<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքում լրացումներ կատարելու մասին>> (*Պ-555-09.04.2020-ԱՍ-011/0*)	Առաջարկվում է 42.1 հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. *Հոդված 42.1 Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլաններ* 1. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները սահմանում է արտակարգ իրավիճակում առողջապահության բնագավառի գործունեության հիմնական սկզբունքները, արտակարգ իրավիճակի հետեւանքների կանխարգելման, նվազեցման եւ վերացման համար անհրաժեշտ միջոցառումները: 2. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները մշակում և հաստատում է առողջապահության բնագավառի լիազոր մարմինը: 3. Արտակարգ իրավիճակներում առողջապահության բնագավառի գործունեության պլանները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ լիազոր մարմնի կողմից:	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**
<< կառավարություն	<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքում լրացումներ կատարելու	Առաջարկվում է 42.2 հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. *Հոդված 42.2 Արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության եւ սպասարկման կարգը* 1. Արտակարգ իրավիճակի դեպքում առողջապահության բնագավառի լիազոր	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

	մասին>> (*Պ-555-09.04.2020-ԱՍ-011/0*)	մարմինն արտակարգ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված ողջամիտ ժամկետում մշակում և հաստատում է արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպման կարգ, որը պարտադիր է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բոլոր կազմակերպությունների համար:		